

**Ժամանակի պատմաքաղաքական դիմապատկերը
Թամար Հովհաննիսյանի պոեզիայում**

Նարինե Հովհաննիսյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-131>

Հանգուցային բառեր. քաղաքականություն-կյանքի սպանդ, կին-կյանքի արարիչ, ժամանակի դիմապատկերի պոետական հայելի, տառապագին ընդդիմախոսություն, կանացի սիրտ, աշխարհաքաղաքական կոխան

Նախաբան

Պոեզիան մշտապես եղել և մնում է ժամանակի անմիջական զգայադարանը, մարդու և ժամանակի միջև ներքին հակընդդեմ երկխոսության ձայնադարանը, քաղաքակրթության վայրիվերումներն ու անկումները չափազորող և կյանքը հունի մեջ ձգող ոգեղեն ուժը: Իսկատիպ պոեզիան բանարվեստ լինելուց առաջ և հետո իմացաբանություն է, կենսագիտություն, հոգեգիտություն ու պատմագիտություն՝ խոհազգացական ոգեղեն ոլորտում: Պոեզիան նաև ժամանակի գնացքի համանվագային երաժշտություն է, իդեալի և իրականության բախումից երևութացող ինքնաստեղծ պատկերապատում՝ բեկված անհատական կյանքի և անդրադարձված մարդկային սերունդների պատմություն վրա:

Ժամանակի լույսն ու ստվերը, ներդաշնակությունն ու վայրագությունը պոեզիայի զարկերակային լարվածությունը պայմանավորող երկբևեռ երևույթներն են, հոգեկան ապրումների մակընթացությունն ու տեղատվությունը: Այդպիսին է ժամանակակից բանաստեղծ Թամար Հովհաննիսյանի պոեզիան՝ ժամանակի պատմաքաղաքական ու պատմահոգեբանական խոր ու զգայուն ներթափանցումներով, պատկերային ուրույն համակարգով, տողի ու հանգի ինքնատիպ համաչափություններով:

1. Կին-կյանք արարող և քաղաքականություն-կյանք ոչնչացնող դիմադարձությունը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում

Երկրագնդի քաղաքական պտույտը Թամար Հովհաննիսյանի պատմաքաղաքական ու պատմահոգեբանական պոեզիայում անցնում է կանացի սրտի միջով՝ ժամանակի հոգեբանական ընկալման անձնական կերպից դառնալով անանձնական, անհատական պոեզիայից՝ համընդհանրական: Այո՛, Թամար Հովհաննիսյանի պոեզիան կանացի պոեզիա է, որն իր մեջ խտացնում ու անդրադարձնում է մարդու պատճառած տիեզերական ցավը, մահվան ներխուժումը կյանքի հովիտ, դժոխքի հաղթանակը դրախտի հան-

դեպ: Կյանքի դրաման, աշխարհի վայրագ ընթացքը բանաստեղծուհին վերապրում է բազմախոց հոգու ներքին լարումներով. *«Լսելիքս խոշտանգվում է ձայնահյուսից հնչող / Ողբասաց կանանց վայնասունից հուսահատ. / Ես խլանալ եմ ուզում / Ես կուրանալ եմ ուզում, / Քանզի դժոխքը ներխուժել է դրախտ...»* [3, 117]:

Կին-կյանք արարող և քաղաքականություն-կյանք սպանող դիմադարձությունը Հովհաննիսյանի պոեզիայի ներքին դիմագիծն է, ապրումների առանցքը: Կյանքի արարիչ կինը հոգու և մարմնի բոլոր հյուլեններով շաղկապված է կյանքին, ու կյանքի կորստի հետ կորուստներ է ապրում և ինքը՝ դառնալով թեր կոտորած հրեշտակ և շագրենի կաշու պես ֆիզիկական էներգիան կորցնող ու փոքրացող երևույթ՝ կամ չորացող ծառ ու ցամաքող աղբյուր. *«Ու ը է առաջնորդում մեզ ատելությունն այս համատարած, / Ու մ որդու որդրմաթասն է պարպվելու այսօր... / Ու ճերմակ աղավնիների երանը դիվահար / Պտտվում է դժոխքի ու դրախտի սրահներում, / Ապրելը բախտախաղ է, որը չի տնօրինված վերից, / Մարդը որոշել է ստանձնել դերն Արարողի / Ու չի վախենում իր ստանձնած դերից»* [3, 117]:

Իշխանություն դարձած անտարբերության դեմ Թամար Հովհաննիսյանի պոեզիան ինքնահաստատվում է որպես գորեղ ընդդիմություն, դառնում թմրեցված խղճի վերարթնացման ճիչ, մահաբեր օրենքների դատապարտման վճիռ, միաժամանակ՝ կործանվող աստվածների և սատանաների շքերթների հուսահատ պատմագիր. *«Աշխարհը՝ չարորակ ուռուցքը ներսում, / Կեղծիքով հարդարում է ողջությունը իր սուրբ, / Լռությունը սպանում է, հզորները ձեռնպահ՝ / Եղերական անցքերը կոծկել են ուզում / Ցավակցական ուղերձներով անհոգի ու սուտ... / Ես տեսնում եմ մահը իմ ժամանակի / Պայթեցվող մանուկների ցրված փորոտիքներում, / Որոնց սարսափի պահ իսկ չի վերապահվում... / Մինչ օրենքները գրվում են ու ջնջվում են փոփոխական, / Թանաքներն անգամ չչորացած, / Երազարձությունները հերթափոխում են խելահեղ, / Մարսափի ուրվականներ են ցրել ամենուր, / Երեկվա աստվածները դարձել են խաչագող, / Ու խաչագողներն անցյալի՝ ինքնակոչ արքա...»* [3, 117]:

Երկրագնդի քաղաքական ընթացքը ձգված նյարդալարի պես Հովհաննիսյանի պոեզիայում նվվում է ձայնի ու ոճի փոփոխակներով, հոգեկան ապրումների համանվագայնությամբ: Կյանքի քառսի մեջ անորոշության ծանր վարագույրները հետ քաշելու և լուսամուտ բացելու կենսական մղումով բանաստեղծուհին կարդում է «Մթափության աղերս»՝ ուղղված նորին մեծություն քաղաքականությանը. *«Ձանգերը տազնապեցնող / Գուժկաններ են հավանական պատերազմի, / Բսկ մեր օրերում հաղթանակը ապահովում է / Տարողությունը գրպանի: / Եվ մտահոգության թուխսը հետապնդում է ինձ: /*

Կարծես սև վրան է՝ տեղից տեղ շարժվող, / Որը խլում է լուսը ազահորեն՝ վերից...» [3, 122]:

Բանաստեղծի ապրումների համանվագում հնչում է նաև մենության ու չհասկացվածության դրաման, իրադարձությունների շղթայակապում իր տեղն ու դերը վերաքննելու և վերաճշգրտելու հարցապնդումը, առկա վախի ու վաղվա կանխագագումի իրական կապի որոնումն ու որոշակիացումը. «Թվում է՝ ես շարունակ ինձ եմ որոնում / Կատարվածի ու լինելիքի միջանցքներում հսկա: / Վախը վաղվա օրվա մեռյալ ներկայություն է, / Վիճակների շրջադարձային փոխանակումներ չկան...» [3, 122-123]:

Հաջորդում է հոգու լուռ ցավի թանձրույթը ձեռքող և ձայնի փոխակերպվող ճիչ-հորդորը՝ կանխելու բարոյականության վերջնական կործանման աղետը, հաստատելու մարդկային կյանքի լինելության իրավունքն ու խառնիճադանջը տոնող բարբարոսության չքացումը. «-Հե՛յ, - ուզում եմ ճշալ,- չկան ավելորդներ, / Դադարեցնել է պետք քաջքշուքն այս անիմաստ, / Ինչ որ պատահի վաղը, բոլորիս խնդիրն է, / Ու աղետի գոտում ընտրյալներ չկան... / Մեզ գեթ մի վերջին այիք է պետք՝ / Հավաքական ազնիվ ոգեկոչումի, / Մի վերջին հրավեր ողջամտության, / Որպեսզի բոլորիս տանիքը չփլվի...» [3, 123]:

Հետգհետե որոշակիանում է նաև կանացի անգորությունից ծնված թախիծը՝ մտահոգությունների ու տարակուսների երևեջային մեղեդայնությամբ: Օղի մեջ առկախվում է հարցական բառերի ու մտքերի մի ամբողջ շարք՝ երևան բերելով կանացի նուրբ ապրումների ու մորմոքների ուղեծիրը. ի՞նչ են գգում կորովի զինվորները նահանջելիս, ո՞ր պետք է գնան պատերազմից փախած և նորից հետ ուղարկվող երեխաները, ինչպե՞ս է արձանագրվելու աշխարհի պատմությունը դար հետո, արդյոք մահը կյանքից երանելի՞ է դառնալու, ո՞ւմ են ծառայելու վարձու բանակների արձակված զինվորները, և անորոշության դատապարտված այլ հարցեր, որոնք մասնավորումով հանդերձ ընդհանրացնում են կյանքի դրամատիզմը. «Տեսնես ի՞նչ են գգում / Ջահել զինվորները նահանջելիս, / Եվ կամ սերմնաթափվող ծաղիկները, / Երբ շուրջը հող չկա... / Տեսնես ո՞ր են որոշում գնալ / Կրակի բերանից փախած / Ու փրկության ասիից տուն՝ / Հետ ուղարկվող / Փախստական երեխաները... / Տեսնես ո՞ւմ են ծառայելու / Վարձու բանակների / Տուն վերադարձած զինվորները, / Ու որտե՞ր, ի՞նչ դրոշներ են իջեցվելու / Նրանց մահախոսականից հետո...» [3, 120]:

Տիեզերքին հղված վերջին հարցադրումը այսպիսին է. «Տեսնես ո՞վ է կանխելու կործանումը / Խելահեղ երրորդի, / Որը երբեմն երևանվում է հորիզոնում» [3, 120]:

Երրորդը Աստված է, Սուրբ երրորդությունն ինքը, երրորդը նաև մոլո-

րակի կյանքն է, աստվածային արարչագործության երրորդ օրվա խորհուրդը. դա է գլխավոր մտահոգությունը, այդ է գերագույն տաճնապը՝ կյանքի կործանման անընդհատականությունը, մահվան երկիրը՝ առանց մարդու, կենդանության չքացումն ու անթաղ դիակների անտերությունը. *«Տեսնես ե՞րբ են հանդարտվելու / Ատելության փոթորիկները, / Ու դիապարկերը շարունակվելո՞ւ են / Շարվել կողք կողքի, / Մարսափից սահմուկած մանուկների / Աչքի առաջ: / Ու տերեր չեն գտնվելու, / Որ հանձնվեն հողին...»* [3, 120]:

Բանաստեղծուհու խնդրահարցերը մնում են չլուծված. օդում դարձյալ թափառում են պատերազմի ուրվականներն ու մահագույժերի նախահնչունները: Սկիզբը վերապրվում է որպես վախճանի ուրվական, լուսաբացի սպասումը նույնականանում է վախին, ու ներքին վախը, ներքին տաճնապը վաղվա հանդեպ դառնում են մշտառկա հոգեվիճակ. *«Ես վախենում եմ. / Լուսաբացներն են սկսել / Վախեցնել ինձ: / Լուրերի հեռարձակումները դիտելուց առաջ / Ես խաչակնքում եմ»* [3, 121]:

Այդպես է, որովհետև հոգին կեղեքող մուտք տարակույսներին չի հաջորդում լույսի տեսանելի շողը, սփոփանք չկա տիեզերքի ցավը լուռ սրտում կրող ու ցավի կշռից հետզհետե ճկվող-մարող կին-կյանք արարողի վշտին, քանի որ աշխարհի ուղեղը հիվանդ է, ու ապաքինումը վստահված է «հավաքական խենթությունը» կրող մի քանի տերերի. *«Թվում է, թե աշխարհը ուղեղ է հիվանդ / Եվ կամ համակարգիչ վիրուսախեղդ, / Որը փոխարինել չի լինելու նորով, / Քանի դեռ տիեզերքը չի գաղութացվել... / Հիվանդ է մոլորակը, / Ապաքինումն իր վստահած / Հավաքական խենթությունը կրող / Մի քանիսին...»* [3, 119-120]:

2. Ժամանակի դիմապատկերը պոետական հայելու մեջ

Թամար Հովհաննիսյանի պատմաքաղաքական պոեզիայի քնարական կերպարը մերթ հանդես է գալիս որպես կյանքի արարչուհի, որ անգոր կոիվ է տալիս կյանքն սպանողի՝ քաղաքականության դեմ, մերթ՝ կերպավորվում է որպես իդճի առաքյալ՝ նորին անտարբերության դեմ, մերթ՝ իբրև խաղաղության պատրանք՝ պատերազմներին դեմ հանդիման: Կերպարանափոխության հետ տարբեր փոփոխակներ է հետագծում նաև պատկերաստեղծումը: Բանաստեղծությունների պատկերային համակարգը, խոսքի գեղագիտությունը միանգամայն ներդաշնակվում են ասելիքի տրամաբանությանը, հոգեբանական հոսքին, ոճի փոփոխությունը ուղիղ համեմատական է խոսույթի էությանը, հոգեբանական ապրումի բնույթին:

Խոսքի տրամաբանության հետ ներդաշնակվում են նաև բանաստեղծության ներքին երաժշտականությունն ու տողերի ռիթմը: Ահա «Պատերազմ» բանաստեղծությունը, որի տների կառույցը թողնում է զինվորական շարասյան քայլերթի ռիթմի տպավորություն, իսկ ներքին երաժշտականությունը՝ խրոխտ ու կտրուկ ռազմերգի ազդեցություն. *«Համագգեստավորները հաշող*

շներ են կանաչ, / Ուր որ է՝ պիտի դուրս ժայթքեն էկրանից, / Այրվող տները արգանդներ են հերձված, / Եվ հուշերը ծուխ դարձած վեր են էլնում սարսափից: / Վտարանդիները քայլում են մտամոլոր, փոշոտ, / Անհովիվ մնացած հոտի նման, / Աշխարհն ասես ջնջվում է, որ գծվի նորից / Միայ ընթացած էսքիզի նման...» [2, 321]:

Ստեղծագործական տպավորության չափին նպաստում են ոչ միայն բանաստեղծության հոգեբանական խորքը, այլև անսովոր պատկերակերտման արվեստը, խոհի հայտնագործությունը, ավանդական և մոդեռն լեզվամտածելակերպերի սահուն ու նուրբ համակցումներն ու փոխանցումները. «*Ես նախանձում եմ կույրին այն / Խարխափող ու մանրընթաց / Ինձ տեսանելի դժոխքը չկիսելու համար: / Կին մի՛ ոտքը ծանր, փովել է մեջտեղում, / Խաչմերուկի կենտրոն է որովայնը պրկված. / Նրան մե՛կ, թե՞ երկու դիպարկ է հասնում / Աշխարհի ամոթը պարփակելու համար» [2, 321]:*

Աշխարհի համառ անկման ընթացքում, ուր մեկն ապրում է մյուսի մահվան հաշվին, որպես ընթացքի հետագիծ մնում են «Դիերն անդամահատ, արնաշաղախ ու թարմ» [2, 321]: Այսպես, քաղաքական խաղացողները կյանքը վերածում են սպանդանոցի՝ օրորոցների փոխարեն ցրելով դիպարկեր:

Մահվան ներկայությունը գերակա է ու տիրական ամենուրեք, օդն ինքը արտաթորում է մահահոտ, շուրջբոլորը մթագնում են մահվան գույներ, մահապատկերներ, մահվան էսքիզը երկարվում է հորիզոնից հորիզոն՝ դառնալով նաև համընդհանուր մտասևեռում. «*Մահն ապրում է իմ շուրջ, / Շունչը գինեհոտ, աչքերն արնակալ, / Խորշերը խորխոտ, հոգին մաղձապատ... / Ո՞վ է արարել գլուխգործոցն այս, / Ընձա առաքել ինձ տարտարոսից, / Քեզ վախենում է ետ վերցնել Աստվա՛ծ...» [2, 333]:*

Ժամանակի ընթացքի կառավարիչը քաղաքական իշխանությունն է, որն «...Իր ոհմակով / Անգեն ու տքնող հասարակության / Անդամներին իր գոհն է համարում / Ու կարող է ճաշակել յուրաքանչյուրին / Քիմքի քմահաճ թելադրանքով» [2, 349]: Ու այդ պայմաններում, երբ կանաչ թղթերով է որոշվում ճնշաչափը, ապրելը դառնում է «մասնագիտություն», որին տիրապետելն էլ «խաբկանք է գունազարդված»: Քաղաքական անհոգի խաբեությունը երկրներ է առաջնորդում և լքում նրանց փակուղիների առաջ: Մարդկության գոյավիճակը գաղութացված է երկրագնդի քաղաքական տերերի կողմից, ու մի գիշերվա ընթացքում ծախու իշխողները կարող են տակն ու վրա անել ամեն ինչ՝ «Պատճառը կարգին չարտաբերած» [2, 349]:

Ժամանակի պատմահոգեբանական մի ուրիշ պատկեր է «Մանկության դաժանությունը» բանաստեղծությունը: Բոլոր տեսակի անկումներին ավելանում է հոգևոր արժեքների անկումը: Մանկության դաժանությունը հաստատագրվում է համատարած առուձախով, անիմաստության իմաստավորումով, անմտության ներարկումով ու բթացումով, հավաքական մտքի չքացու-

մով, մոլախոտի պես աճող հաշվենկատ ապամշակույթով ու բազմապիսի այլ կերպարանքներով: Մնանկության այդ հաղթահանդեսի պատկերը ուղեկցվում է վաղվա օրվա կասկածի մտավախությամբ, որովհետև արժեքների ոտնահարումն ու փլուզումը սասանում են հուսալի ապագայի հիմքերը: Անփառունակ շքերթից ինքնական հրաժարված բանաստեղծուհուն ոչինչ չի զարմացնում այլևս: Կողք կողքի ապրում են ինքը և մարդկային սնանկությունը, համատեղությունը, սակայն, ֆիզիկական է միայն, մինչդեռ հոգեբանորեն ամեն պահի անհաշտություն է և անհամատեղելիություն. «*Ես տեսնում եմ, թե ինչպես / Ամբոխը քրջանոլ / Շլացած, բերանբացորեն / Իմաստավորում է անիմաստությունը, / Եվ ինչպես է միտքը հավաքական / Ներարկվում աննտության թմրադեղով... / Ես տեսնում եմ, թե ինչպես են / Խլահավերք հորջորջվում երաժիշտ / Ու պատեհապաշտները կպչուն մարզարեի / Համարում անսուս էժանագին ամբոխից...*» [2, 376-377]:

«Վաղվա անհուսությունը սարսափեցնում է», – [3, 131] արձանագրում է բանաստեղծը՝ աչքի առաջ ունենալով ժամանակի հակաբարոյական դիմապատկերը, օրենքների գաղութացումն ու կանոնների ինքնաթելադրումը: Կանացի կանխագագումով Թ. Հովհաննիսյանը պարզորոշ տեսնում է մարդկության գոյությանն սպառնացող վտանգը, «ինչպես ձագերին հսկող թռչունը» [3, 132], ու ժամանակի ողորմածությունը այս դեպքում ընդամենը «պարտք վերցված կյանք» է կամ «ապառիկով գնված ապահովություն» [3, 132]. «*Ես չապրելով եմ ապրում արդեն վերջերս / Ու պարպում ինձ ինձանից դուրս... / Ինքնահսկումի ահագնությունը / Ցավեցնում է կուրծքս...*» [3, 132]:

Համատարած մահվան մտատանջությունը հասնում է մտածական լարման մի կետի, երբ մեղավոր ու մեղսակից են դառնում երկրային սահմաններն ու տարանջատումները. «Ո՞վ է սահմանել տարանջատումն այս ահավոր // Ինչո՞ւ սահմաններ չեն գծված երկնքում» [3, 144]: Դաժանությունը դարձել է համաճարակ և տարածվում է երկրագնդով մեկ՝ թունավորելով մարդկության արյունը, քարացնելով հոգին, մարդու մեջ սպանելով մարդկայինը: «Ժամանակը սկսել է մարդուց վախենալ» [3, 143], – ահագանգում է բանաստեղծը՝ ամենուր տեսնելով դաժանության հոչակումը իբրև իշխանություն. «*Համատարած այս խեղահեղությունը մեզ ո՞ր է տանում, / Եվ ի՞նչ են ծրագրում առաջնորդները դրա, / Պատերազմները այս զանգվածային հուղարկվորումներ են, / Որոնք հնձում են զավակներին կանաչ: / Պտղաբերության երանությունը մեռնում է, / Երբ տեսնում է ուրիշների որդիներին անդամահատ... / Խաթարվել է անդորրը համամարդկային, / Ու երկինքը լվացել է ձեռքերը մեզանից...*» [3, 143-144]:

Թմար Հովհաննիսյանի պոեզիան դառնում է ժամանակի պոետական հայելին, որտեղ արտապատկերվում, բեկվում ու անդրադարձվում են նրա դիմապատկերները: Ժամանակի պոետական հայելապատկերները հաջոր-

դում են իրար շարժանկարի պես՝ փոփոխակներով ու ներքին միասնականությամբ: Ահա դրանցից մի քանիսը ևս. «...Ատելությունը շարունակական / Մեկի կործանումը դարձնում է մյուսի խնդությունը» [3, 150], «Զինվորներն ընկնում են, զորավարները՝ փրկվում» [3, 151], «Ճշմարտացված սուտը նորահայտ գյուտ է / Ու լոկ անմեղների վրա է փորձարկվելու» [3, 151]:

Ու նորից հնչում է պատերազմների հրահրիչ դարձած սահմանների տարանջատման՝ իմաստային ուժգնացում ստացած հարցը. «Ո՞ւմ են հարկավոր սահմանները երկրի / Արյունով գծված ու տարանջատված» [3, 145]: Մա մարդկության ծնող կին էակի՝ կյանքի կորուստներից մտահանգված հայացք է, կին, ում աչքի առաջ սպանվում է իր ստեղծագործության գլուխգործոցը՝ մարդ-զավակը: Միաժամանակ կա տխուր գիտակցումը, որ «Ներդաշնակությունը համակեցության հնարովի երազ է» [3, 145]: Վերստին երևան է գալիս միտքը շաղափող ծանոթ հարցադրումը.

«Ո՞վ է ղեկավարում քառսն այս մշտանորոգ, / Ո՞ւր է գիտակցությունը կույր / Առաջնորդում աշխարհը: / Տազնապնները կարկտահար են անում միտքս, / Ու գրիչս չունի՝ պատասխան դրանց...» [3, 146]:

Բանաստեղծուհու խոսքը հնչում է որպես տիեզերական մոր ձայն՝ ուղղված իր զավակ-մարդկությանը: Մարդը, որ արարչագործության գլուխգործոցն էր, և ում վստահված էր ի վերուստ ապահովել երկրի խաղաղությունն ու արարումը երկրի վրա, դարձել է վերջին ստահակ՝ չխնայելով ոչ ոքի և ավերելով շուրջբոլորը: Բանաստեղծի դրամատիկ հարցադրումները միտված են մարդու դարձին՝ մարդ տեսակին, մարդու աստվածային կերպին. «Ի՞նչ էս ուզում դու քեզ նմանից, / Ինչո՞ւ չես տեսնում ինքդ քեզ» [3, 149]:

Բանաստեղծությունից բանաստեղծություն Թամար Հովհաննիսյանի կանացի դրաման նոր խորքեր է բացում, ներքին պլեբախությունը նոր ափեր է ընդգրկում: «Մարդակերի ձեռքն ընկած մասնատված զոհի պես» [3, 147] երկիրը կտրատվում է՝ ազատության, սեփական սահմանների, կրոնի անվան տակ, մինչդեռ արդյունքը կորուստն է մարդկության, «Որը մղձավանջի պես վերջ չունի» [3, 147].

«-Ազատությունը / Համամարդկային ստերից մեկն է, / Այն ամենուր է և ոչ մի տեղ...» [3, 147]:

Մա է տառապանքից հասունացած վերջին իմաստությունը. այն, ինչին ձգտում է մարդը ծննդյան օրից և ինչի համար կռվի է ելնում, գոյություն չունի իրենից դուրս:

Եզրակացություն

Թամար Հովհաննիսյանի պոեզիան ժամանակի դիմապատկերի լակմուսյան թուղթն է՝ ճշմարիտ ու զգայուն: Դա կնոջ ու քաղաքականության բախման դրամատիկ պոեզիա է, կյանք արարող կնոջ տառապագին ընդդիմախոսություն՝ ուղղված կյանքը ոչնչացնող աշխարհաքաղաքականությանը: Այն 21-րդ դարի մի նոր «Եղիցի լույս» է՝ ժամանակի հետ դրամատիկ բախման և գեղագիտական իդեալի առումով, կանացի մի վերջին հուսահատ ճիգ՝ կասեցնելու մոլորակի վերջնական կործանման աղետավոր ընթացքը: Կյանքի սկզբնաղբյուր կինը, որ Թ. Հովհաննիսյանի պոեզիայի քնարական հերոսն է, իր առաքելությունը գտնում է նախևառաջ մարդկության վերքերը ապաքինելու և կյանքը խաղաղ ու ներդաշնակ հունի մեջ դնելու իդեալի իրագործման մեջ: Թամար Հովհաննիսյանի բանաստեղծական արվեստը ուշագրավ և ազդու պոեզիա է՝ պատկերակերտման ինքնատիպ արվեստով, տողերի առանձնահատուկ ռիթմով, խոհի ու հույզի կանացի խորքերով: Զուգակցելով Արևմուտքի և հայ գրականության առանձնահատկությունները, նրբորեն համակցելով դրանք կամ սահուն փոխանցումներ կատարելով՝ Հովհաննիսյանը ստեղծեց խորապես անհատական, բայց նաև համամարդկային պոեզիա, որի ուսումնասիրության գործը ներկա ու գալիք բանասերներինն է:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-131>

Գրականություն

1. Հովհաննիսյան Թ., Լինելության համանվագ, Ե., 2013, ՀԳՄ հրատ., 480 էջ:
2. Հովհաննիսյան Թ., Տարիքի հոգին, Ե., 2018, «Անտարես» հրատ., 424 էջ:
3. Հովհաննիսյան Թ., Սիրո պարապուրդ, անտիպ գիրք, 710 էջ:

Резюме

Ключевые слова: политика-резня жизни, женщина-творец жизни, поэтическое зеркало портрета времени, страдальческое оппонирование, женское сердце, геополитическая борьба.

Свет и тень времени, гармония и жестокость – двухполюсные явления, приливы и отливы душевных эмоций, которые определяют пульсирующее напряжение историко-политической поэзии Тамар Ованнисян. В статье ключевыми вопросами исследования являются сопротивление женщины-творца жизни политическому разрушению общества и облику времени в поэтическом зеркале. Политическое вращение земного шара в историко-политической и историко-психологической поэзии Т. Ованнисян проходит через сердце женщины, переходя от личной модели психологического восприятия времени к модели безличной, от индивидуальной поэзии к всечеловеческой. Поэзия Тамар Ованнисян – это женская поэзия, которая сгущает и отражает космическую боль, причиняемую человеком, вторжение смерти в долину жизни, победу ада над раем. В ее стихах политический курс Земли застывает подобно натянутой нервной струне, чередуясь с вариациями голоса и стиля, с гармонией душевных переживаний. Поэзия Тамар Ованнисян становится поэтическим зеркалом времени, в котором отображаются, преломляются и отражаются ее портреты. Это драматическая поэзия конфликта между женщиной и политикой, мучительное оппонирование вдохновленной женщины геополитике, губящей жизнь.

Поэтическое искусство Т. Ованнисян – это знаменательная и волнующая поэзия с самобытным искусством создания образов, особым ритмом строк, женской глубиной мысли и чувства. Сочетая черты западной и армянской литературы, тонко комбинируя их или делая плавные переходы, поэтесса создала глубоко личную, но в то же время и всечеловеческую поэзию, изучить которую подлежит настоящим и будущим филологам.

The Historical and Political Portrait of Time in Tamar Hovhannisyan's Poetry

Narine Hovhannisyan

Summary

Key words: *politics-slaughter of life, woman-creator of life, poetic mirror of the face of time, poignant peer review, a woman's heart, geopolitical warfare*

The light and shadow of time, harmony and ferocity are bipolar phenomena, the ebb and flow of spiritual emotions that determine the pulsating tension of historical and political poetry of Tamar Hovhannisyan. The main research issues in the article are the opposition of the woman-creator of life and politics-slaughter of life in Tamar Hovhannisyan's poetry and the face of time reflected in a poetic mirror. The political rotation of the Earth in the historicopolitical and historicopsychological poetry of Hovhannisyan penetrates into the heart of a woman, varying from a personal model of psychological perception of time to an impersonal model, from individual to the universal poetry. Tamar Hovhannisyan's poetry is women's poetry, which embodies and reflects the tremendous pain caused by a man, the invasion of death into the valley of life, the victory of the hell over the heaven. In her works, the political course of the Earth wails like a stretched nerve string, with variations in voice and style, with the harmony of emotions. Tamar Hovhannisyan's poetry transforms into the poetic mirror of time, in which her portraits are displayed, refracted and reflected. This is a dramatic poetry of the conflict between a woman and politics, the painful opposition of the life-giving woman to life-destroying geopolitics.

Tamar Hovhannisyan's poetry is exceptional and engrossing with its original art of creating images, a unique rhythm of lines and feminine depths of thoughts and feelings. Combining the peculiarities of Western and Armenian literature, subtly integrating them or making smooth transitions, Hovhannisyan created a deeply personal, but also universal poetry, which is the subject of study for present and future philologists.

Ներկայացվել է 22.03.2023 թ.

Գրախոսվել է 19.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.